


Հ.Մ.Ը.Մ.
ԱՄՆԿ



Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱՊՐԻԼ 24

Ապրիլիսս 2005

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱՊՐԻԼ 24

Նուիրուած՝

ԵՂԵՌՆԻ ԶՕԱՄԵԱԿԻՆ

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան
24 Ապրիլ 2005
Լիբանան

Անթիլիաս

2005

Պատասխան՝ Կարո թիւթիւննեան

Միայն Յ.Մ.Ը.Մ.ն էր, որ պայքարի
այս եղանակին ծանօթ էր:

Միայն Յ.Մ.Ը.Մ.ն էր, որ այսքան
հայապիպ ձեռով կրնար ծեր ծեկուկէս
ծիւհունին վրէժը լուծել, գրեթէ ճիշդ
հոն, այն վայրին վրայ, ուր ծեր ժո-
ղովուրդը հապարներով, հարիւր հա-
պարներով ծեռաւ աւազներուն վրայ,
սուրով, կայիւնով, հրապէնով, աւօթու-
թեամբ, ծարաւով...:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ





Շամարշ Բրիտան
Հայ մարմնակրթանքի
ռահվիրայ



Գրիգոր Յակոբեան
Հիմնադիր Հ.Մ.Ը.Մ.ի



Յովհաննէս Հինդլեան
Գաղափարախօս
սկսուտական շարժման

ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ

Երաժշտութիւն՝ Բ. Կանաչեանի
Խօսք՝ Գ. Կառվարենցի

*Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ,
Վեց դարու անմոռ վրէժի զրահներ,
Կատարն հայրենի լեռանց հեռագոյն՝
Երթանք կոթողել դրօշակն Եռագոյն:*

*Հսկայ նուիրման
Տորմիղ հրրաթեւ,
Կամաւո՛ր բանակ,
Յառա՛ջ, յառա՛ջ անսասան,
Յառա՛ջ անդեղեւ,
Դէպի յաղթանակ, յաղթանակ:*

*Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,
Տարագիր հայն իր կեանքը նորոգեց,
Երէկ՝ շղթայուած, այսօր՝ ինքնավար,
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:*

*Հսկայ նուիրման
Տորմիղ հրրաթեւ, ...*

Հ.Մ.Բ.Մ.ը հիմնուեցաւ մեր պատմութեան ամենէն ողբերգական ու բախտորոշ մէկ օրջանին, այսինքն Յեղասպանութեան վաղորդայնին, երբ ամբողջ արեւմտահայութիւնը բնաջնջուած էր: Վերականգնումի եւ վերակենդանացման ազգային դարաւոր ոգին էր որ կ'արթըննար ու մարմին կ'առնէր քանի մը գաղափարապատէ երիտասարդներու տեսիլով: Վերապրող այդ տղաները կը ձգտէին վերապրեցնել մեր ժողովուրդին մնացորդացը, անոր շարդուած մկաններուն տալով նոր ուժ, նոր կորով, ինչպէս նաեւ անոր յուսաբեկ հոգիին դիմաց բանալով յոյսի ծիրանավառ նոր հորիզոններ:

Հ.Մ.Բ.Մ.ի հիմնադիրները թերեւս չէին իսկ երեւակայել թէ որքա՛ն փրկարար շարժումի մը ծնունդ կու տային՝ հրապարակ նետելով իրենց նշանաւոր «Բարձրացի՛ր-բարձրացո՛ւր» նշանաբանը:

Այդ օրերուն ընկերւած, կորստաբեր, տառապահար մեր ժողովուրդին բեկորները իսկապէս որ ամեն բանէ առաջ պէտք ունէին իրենց ծնած մեջքին հետ վեր բարձրացնելու նաեւ իրենց մտայն գակասերը.



պէտք ունէին ուժաթափ իրենց բազուկներն ու սրունքները զօրացնելու, որպէսզի կարելի ըլլար զօրացնել նաեւ իրենց կամքը եւ հաւաստը:

Ահա այս շատ կենսական պահանջին գոհացում տալու համար կը ծնէր Հ.Մ.Բ.Մ.ը եւ շատ շուտով կ'արդարացնէր իր կոչումն ու առաքելութիւնը:

Եթե քսաներորդ դարու Հայոց պատմութեան մէջ կան թուականներ, որոնք ժամանակին Հետ աւելի կ'իմաստաւորուին, աւելի կ'արժեւորուին, ու կը դառնան մեկնակէտը մեծ, մնայուն, կենայորդ ու կենարար գործի մը, անոնցմէ է Հ.Մ.Ը.Մ.ի Հիմնադրութեան թուականը՝ 1918:

ՏՈՒՔԹ. ՄԻՍԱՔ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. իր հիմնադրութեան երկրորդ օրն իսկ նետուեցաւ որբանոցներու գեհեմին մէջ եւ մեր կորսուած, անգոյն ու անժպիտ հոգեհաստներու ւրտին մէջ արթնցուց վերապրելու ուխտը մեր ժողովուրդին, յոյս ներշնչեց անոնց եւ եղաւ գորովագութ եղբայր, անշահախնդիր ծնողք:

Անդրադառնալով այս հարցին, կը նկատենք որ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ժողովը տեսած է միայն կէս ժամ: ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒՄԷՆ ԵՏԲ, օրակարգի երկրորդ հարցը եղած է ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻԻՆԸ:

Հ.Մ.Ը.Մ.ը բազմաճիւղ եւ շքեղօրէն սաղարթախիտ ծառ մը դարձած է ազգային մեծ «անտառ»ին մէջ: Թաղերու մէջ Հիմնուած որբանոցները ժամանակն էր որ բանային իրենց դռները՝ Հոն Հաւաքուած մեր որբերուն Հասնելու Համար: Այդ էր արդէն Հ.Մ.Ը.Մ.ի Հիմնադրութեան մղում՝ տուող առաջին գաղափարը:

ՏԻԳՐԱՆ ՔՀԼՅ. ԽՈՅԵԱՆ

Օրակարգի երրորդ կէտը՝ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻԻՆԸ յետաձգուած է յաջորդ ժողովներէն մեկուն, ժամավաճառ չըլլալու եւ վայրկեան առաջ հասնելու հայ որբուկներուն: Ահա՛ թէ ինչու Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ ժողովը տեսած է միայն կէս ժամ:

Ստորեւ՝ քանի մը յուս միայն այս կարեւորագոյն պարագան առանձնաբար եւ առարկայական ձեւով ընդգծած ըլլալու համար:

ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹԻՒՆ 20 ՀԱԶԱՐ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ


«Առաջին պատեհ առիթով Ղալաթիոյ եկեղեցւոյ օրջափակին եւ Սկիւսարի մէջ հիմնեցինք ԱՌԱՋԻՆ ԶՐԻ ԴԵՂԱՐԱՆԸ եւ ՇԱՐԺՈՒՆ ՀԻԻԱՆԴԱՆՈՅԸ, սկառսներ տրամադրեցինք այդ գործին համար, աշխատանքի բաժանման եւ կարգապահութեան գծով մեր ձեռքէն եկածը ըրինք եւ այս գործը տեւեց երկու ամիս, որու միջոցին հազար հինգ հարիւրի մօտ գաղթական եւ կարօտ հիւանդներ ինամեցինք:



Սկիւսարի մէջ սկաուտները ՉՈՐՅԱԾ ԾԱՌԵՐ ՀԱՒԱ-
ՔԵՑԻՆ եւ սրամադրեցին սարագիրներու կայանին իբրեւ
ձմրան վառելիք»: (Հ.Մ.Ը.Մ.ի Առաջին Կեդրոնական
վարչութեան առաջին տեղեկագիրը, 1 Նոյեմբեր 1918էն –
1 Հոկտ. 1919):

Հ.Մ.Ը.Մ.ի վարիչներու առաջին պարսկականութիւն-
ներէն մէկը եղաւ նաեւ զգեսաւորել «ՆՈՐ ԲՈՂԲՈՋ-
ՆԵՐ»ը սկաուտական սարագով: Այս նպասակը իրա-
գործելու համար 1920ին, Ս. Զասկուան տօնին առիթով,
Պոլսոյ թաղերը կ'ողողուին հայ սկաուտական խումբերով:

Բաժնուած բոխարթներու վերստնութիւնն էր «ՅԻ-
ՇԵՆՔ ՄԵՐ ՈՐԲԵՐԸ»: Հայ ժողովուրդը յիշեց իր որբերը,
յիշեց ու անոնց մէջ տեսաւ իր գոյութեան խարխախը ու
նուիրեց չորս հազար ոսկի, որպէսզի հայ որբն ալ սկա-
ուտական սարագ ունենայ:



Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը եռանդով ու նուիրումով կը լծուի Գարակեօզեանի (Շիւլի), Եսայեանի, Խասգիւղի, Արամեանի (Գասը գիւղ), Միխիթարեանի (Գասը գիւղ) Պէյլերպէյի, Առնաւուս գիւղի, Պեգազեանի (Մագրի գիւղ), Վիքրի Հօմի (Գում Գափու), Տեօջ Հօմի (Մահմուս Փաւա) եւ ԵՏԻ Գուլէի որբանոցներու աւելի քան տասնհինգ հազար հոգիի բարոյական ու ֆիզիքական դաստիարակութեան աշխատանքին: Յայտնի մարզիկ եւ բարձրութիւն ցատկելու ախոյեան՝ Բիւզանդ Կեօզիւպէյիւֆեան, որբերու խնամաստարութեան սնօրէնի իր հանգամանքով, սկաւտիզմը եւ մարզանքը պարտաւորիչ դարձուց որբանոցներէն ներս, այդ գործը վստահելով Հ.Մ.Ը.Մ.ին: Այսպէսով ամեն մասնաճիւղ կը ստանձնէ իր տղանի որբանոցին սկաւտական ու մարզական դաստիարակութիւնը:

Տակաւին, մեր հիմնադիրները, իսկուրթ-իսկուրթ, գործասեղիէ գործասեղի երթալով գործ հայթայթեցին բոլոր չափահաս որբերուն:



Եսայեան որբանոցի սկաւտները:

ՄԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՒՐԱՀԱՒԱՔՄԱՆ ԳՈՐԾԻՆ

Մեր սկսուսները իրենց անվերապահ աջակցութիւնը բերին նաեւ Ա.զ.գ. Իւսխանութեան նուիրահաւաքման գործին: Հ.Մ.Ը.Մ.ի մասնակցութիւնը Հայոց Պատրիարք Զաւէն Տէր Եղիայեանի կողմէն, հրաւազորձ արդիւնք տուաւ եւ հանգանակութիւնը ամէն տեղ ակնկալուածէն շատ արելի յաջող դուրս եկաւ:

ԱՅՊ. ԻՆՏԵՆՏԱՆՈՒԹԻՒՆ
ՏԵՐԵՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅ ՍՈՐԵՊՊՈՒՆ ԿՈՄԻՏԵ
ՄԻՍՅՈՒՆԻՆ

Երևան, 15 Եփրէլի 1922

Երևանի Պատրիարքարան
Սրբ. Բարձր. Կաթողիկոս
Քրիստոսի Կաթողիկոսի

1. Եփր. Կաթողիկոս	20 շ/բ
2. " Կաթողիկոս Կաթողիկոս	20 "
3. Կ. Կաթողիկոս Կաթողիկոս	20 "
27. Կ. Կաթողիկոս Կաթողիկոս	20 "
30. Կ. Կաթողիկոս Կաթողիկոս	20 "
3/5 Տ. Կաթողիկոս 922 1/2 Կաթողիկոս Կաթողիկոս	46 շ/բ
<i>Կաթողիկոս</i>	657 շ/բ

Ընդ ստորագրութեամբ Քաթողիկոս Կաթողիկոս
Կ. Կաթողիկոսի:
15 Եփր. 922
Կաթողիկոս

Վարդապետ Մարտիրոս
Ա. Ե. Կաթողիկոս

4000Է ԱՒԵԼԻ ՀԱՅԵՐՈՒ ԿԵԱՆՔԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ

Եալովայէն (Մարմարա ծովուն վրայ) Տխուր լուրեր կը հասնին: Հայերու կեանքը վսանգի տակ է, ջարդը՝ անխուսապելի: Հ.Մ.Ը.Մ.ի արթուն ղեկավարութիւնը անմիջապէս ձեռք կ'երկարէ այդ հայորդիներուն եւ նաւ մը վարձելով ստոյգ մահէ կ'ազատէ տուրջ չորս հազար հայեր: Նաւուն վարձքը ամբողջութեամբ կը վճարուի Հ.Մ.Ը.Մ.ի սնունդէն:

ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՆԵՐՍ

Պոլսոյ մեջ հիմնուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հագիւ չորս տարուան կեանք մը ունեցաւ, որուն ընթացքին աւելի շատ զբաղեցաւ Հայրենիքի կարիքներով եւ որքերու ինքամքով, քան մարզական շարժումով: Ամէն պարագայի, Հ.Մ.Ը.Մ.ի վարիչները չեն վարանիր նոր ակօսներ բանալու իրենց արդէն իսկ ընդարձակ գործունեութեան դատարան մէջ: Ներկայ



են եւ կը գործեն ամէն տեղ, սակայն այս անգամ ուժերու առաւելագոյն լարումով՝ օգնելու Հայաստանի որքերուն, հայկական բանակին ու մարմնակրթամքի զարգացման:

«Հրամայական է այդ պարտականութիւնը, որովհետեւ ահա՛ կը լսենք հայրենամուտէր փողը, մեզի է այս հրաւերը», կը գրէ Հ.Մ.Ը.Մ.ի պատշտամքերը՝ «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ» Հայաստանի անկախութեան երկրորդ տարեդարձին առի-

Քսանթրորդ դարուն, Ապրիլեան օրհասական Եղեռնէն անցած եւ ինչելու վճռականութեամբ, մեր ժողովուրդի զտարին զաւակներէն «իրենց Հոգիներուն մէջ արեւունեցող» երիտասարդներ, Ազգին յաւերժութեան Հաւատքով նուիրումի կամքով վարդաթոյր ապագայի մը տեսիլքէն մղուած, Հիմը դրին Հոգեկան, ազգային, գաղափարական մեր արժէքներու պաշտամունքին ձօնուած բազմախորան տաճար՝ քառագմբէթ Հ.Մ.Ը.Մ.ին:

ՏՈՒՔԹ. ՄԻՍԱԷ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

թով: Եւ չ'ուշանար կրթական նախարար Նիկոլ Աղբալեանի հրահրերը ուղղուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:


Կարելի չէր չանսալ կրթական նախարարի կոչին, Հայաստանի քառասուն հազար որբերու ձայնը կը հասներ զգայասիրտ հայորդիներու: Երեք մուրեալներ՝ ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶ, ՏԻԳՐԱՆ ԽՈՅԵԱՆ եւ ՕՆՆԻԿ ԵԱԶՄԱՃԵԱՆ, հայրենիքի կարօտը իրենց արտին մեջ, կը մեկնին դէպի երկիր – Մայր Հայաստան, 26 Յուլիս 1920ին:



Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստան մեկնող առաքելութիւնը նստուն վրայ. ձախտն աջ՝ Տիգրան Խոյեան, Վահան Չերազ եւ Օննիկ Եազմաճեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը չգոհացաւ սակայն միայն մարզիչ ուղարկելով Հայաստան եւ անոնց հետ՝ գիրք, թերթ, ժապաւեան, դրօշակ ու գոյժ: Կար կենսական այլ խնդիր մը. ՈՐԲԵՐԷՆ ԳԻԻՂԱՏՆՏԵՍՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ ԳՐԿԵԼ: Այս նպատակին համար որբեր հաւաքուեցան Արմաշի դպրեվանճր:

1921ին, գիւղասնեւս այդ տղաքը պատրաստ պիտի ըլլային Հայաստան մեկնելու, սակայն 1920ի կոտորածը կը քանդէ այդ մեղուանոցը: Բոլորը առժամաբար կը հաստատուին Պոլիս, ուրկէ 1920, Օգոստոս ամսու գեղեցիկ օր մը, 126 հողագործ սկաւուսներ կը մեկնին Երկիր:



Արմաշի սկաւուսները, որոնք Հայաստան գացին ծառայելու համար հայրենիքին:

Այսօր կ'անդրադառնամ, որ Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտը կտոր մը Հայրենի Հող էր կարծես մեր ոտքերուն տակ: Հոն մենք կը մոռնայինք գաղթը, աքսորը, թշուառութիւնը, ջարդերու պատկերներն անգամ, որոնց յիշողութիւնը այնքան թարմ էր տակաւին ամէնուն մտքին մէջ: Հոն մենք մեզ կը զգայինք միտիթարուած, երջանիկ, յուսալից: Հոն գալիքը մեզի կ'երեւէր լուսաշող եւ կեանքը՝ վերածաղկող գարնան պէս ինդալից:

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆՆ

ԵՐԿԱՐԱՏԵՒ ՆՈՒՒՐԱՀԱՒԱՔ ՀԱՅՐԵՆՒՔԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

1919ին, Պոլսոյ մէջ կը հիմնուի Հայրենիքի Օգնութեան Մարմին մը (ՀՕՄ), բաղկացած պոլսահայ կազմակերպութիւններու մեկական ներկայացուցիչներէն: Այս մարմնին Հ.Մ.Ը.Մ. կը բերէ իր բոլորանուէր աջակցութիւնը:

Ազգային ու ֆաղափական ըմբոնումի այս խոր գիտակցութեամբ, Հայաստանի «ԲԱՆԱԿԻ ՕՐ»-ուան անփիւ, «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ», 16 Փետրուար 1920ի համարին մէջ, «ՎՃԱՐՆԵՅԷՔ ԶԵՐ ՊԱՐՏՔԸ ՀԱՅ ԲԱՆԱԿԻՆ» խորագիրով կոչ կ'ուղղէ հանրութեան: Այս կոչին ամենէն առաջ կը պատասխանէ Հ.Մ.Ը.Մ., զօրակոչի ենթարկելով իր բոլոր միաւորները, հսկելով հանգանակութեան գործին:

Հայաստանի Հանրապետութեան կողմէ Ալեքսանդր Խասիսեան արդէն իսկ ուղղուած էր արժանապատեան, հայկական գաղութներու մէջ հայկական բանակին ի նպաստ հանգանակութիւն մը ընելու: Իր առաքելութեան նամբուն վրայ, Խասիսեան, 1920 Յուլիս 3ին, հայրենաճունչ կուռ բանախօսութիւն մը կու տայ Պոլսոյ Բերա Թաղամասի «Սիլլօղոս» սրահին մէջ:



Խասիսեան շատ ուղիղ էր ու անկեղծ: Երբեք չփորձեց ծածկել հայրենի աշխարհի տարաբախտ պայմանները: Մրսբարգոյն պարզեց բոլոր դժուարութիւնները եւ ըսաւ. «Հայաստան պէտք ունի ամեն տեսակի եւ ամեն աստիճանի օգնութեան: Անոնք որոնք պիտի երթան հայրենիք պէտք չէ ակնկալեն ճոխ ու հանգստաւէտ ապրելակերպ: Պիտի երթան միայն նուիրումի զգացումով եւ իրենց գլխաւոր վարձատրութիւնը պիտի ըլլայ Հայաստանի աննման օդն ու ջուրը վայելել ու նորագոյն հայրենիքի վերելքին օգնած ըլլալու զգացումով երջանկանալ»:

Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խասիսեանի ազգաւունջ այս ճառն էր փոխառնելով օր ետք, Հ.Մ.Ը.Մ. կը յորդի իր հունեան ու անվարան կը դիմէ իր կոչումին բարձունքներ՝ դնելով իր թեկնածութիւնը:

Չմոռնանք, որ Պոլսոյ մէջ խումբ մը ողջմիտ մարդիկ Հ.Մ.Ը.Մ.ին ծնունդ տուին ոչ թէ գաղութներուն Համար, այլ մեր Մայր երկրին՝ Հայաստանի Համար:

**ՎԱԶԳԷՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Հոս, պէտք է խոստովանիլ որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը գիտակ էր իր առաքելութեան ծանրակշիռ բնոյթին, ծանօթ էր նաեւ Արարատեան աշխարհի հայութեան իսկական վիճակին, հոն սիրող անձուկ պայմաններուն, բայց հայրենիքին օգտակար ըլլալու տեսիլը, ծառայելու տեսիլը, զոհաբերուելու ոգին վեր էր ամեն նկատմամբ:

Նոյն մօտեցումով Հ.Մ.Ը.Մ. օգնութեան ձեռք երկարեց նաեւ Հայաստանի իր եղբայր սկառսներուն, տուներէն դրամ եւ հագուստ հաւաքելով ուղարկեց Հայաստան (1-25 Նոյեմբեր 1920), յիշեալ 24 օրերը հոչակելով «ՍԿԱՌԻՏԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ»:


ԽՐԱՄՆԵՐՈՒ ՊԵՂՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ Ի ԽՆԴԻՐ

Թուրք եւ հայ բախումներու օրերուն, Հ.Մ.Ը.Մ.ի «կամաւոր զինուորներ»ը մեկէ աւելի մակասներու վրայ կ'օգնեն հայկական բանակին, իբրեւ սուրհանդակ, մթերանոցի պահակ, մասակարար, դրօշախօս, կարմիր խաչ եւ այլն: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ի անզուգական գործիչներէն՝ Վահան Չերազի նամակներէն մեկուն մէջ կը կարդանք հետեւեալը.-

«Այժմ դադրած ենք սկաւոս եւ մարզիկ ըլլալէ, բոլորս կամաւոր զինուորներ ենք ու մեր հայրենիքի պաշտպանութեան համար խրամներ կը փորենք»:



Վահան Չերազ կամաւորական գունդի մէջ
(*ոտքի՝ աջէն երրորդը*) 1916-ին, Երեւան:



Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը հարստացնող արժեքաւոր փաստաթուղթ մըն է այս եղով տրուած նամակը, որ 32 այլ փաստաթուղթերու հետ, վերջերս յայտնաբերուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան արխիւներէն:

Երկուփուլեկ ձեռագիր եղերով, նամակը կը կրէ 17 Օգոստոս 1920 թուականը եւ ուղղուած է Հայաստանի այդ օրերու կրթական նախարար՝ Գեորգ Ղազարեանին: Նամակին սակ ստորագրած են Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ հայրենիք գործուղուած չորս նուիրեալներ՝ Վահան Չերազ, Տիգրան Խոյեան, Օննիկ Եազմանեան եւ Եզնիկ Քաջունի: Ստ-

րագրեալները Հայաստանի իշխանութիւններուն կը ներկայացնեն միութեան ծրագիրները եւ անոնց իրականացման համար անմիջական կարգ մը առաջարկներ:

Համաձայն նախարարութեանդ հրաւերին եւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) կեդրոնի կարգադրութեան, *«աս որո՞ւ ու մշակուած ծրագրով եկած ենք Հայաստան, անմիջապէս կազմակերպելու ամբողջ մայր երկրի մէջ մասնաւորապէս սկսուածական եւ ընդհանրապէս մարմնակրթական շարժումը:*

Ջերմօրէն հաւատացած, որ նախարարութեանդ մեծագոյն ցանկութիւնն է անմիջապէս գործնական ընթացք սալ մեր առաքելութեան նպատակներուն, *«ձեզ կը ներկայացնենք այդ տեսակէտն եւ անհրաժեշտութեան կարգով մեր հետեւեալ առաջադրութիւնները:*

Ա. ԿԵԴՐՈՆԻ ՀԱՐՑ

Հայաստանի գլխաւոր քաղաքներէն յարմարագոյնը մեր անձնական դիտողութիւններուն իբր միակ հետեւութիւն՝ պէտք է լինի Ալեքսանդրապոլ (Գիւմրի) քաղաքը իր բազմակողմանի յարմարութիւններուն համար:

Բ. ՊԻԻՏՃԷ

Ըստ հանրային կրթութեան նախահաշուի, պետութեան կողմէ մարմնակրթութեան յատկացուած պիւտճէի սահմաններուն մէջ եւ մեր կողմէ յաջորդաբար ներկայացուելիք պահանջագրերու համաձայն կատարել յատկացումներ: Այս առթիւ մեր առաքելութիւնը իւրաքանչիւր պահանջագրի հետ պարտաւոր պիտի լինի ներկայացնելու մանրամասնութեամբ հաշիւ եւ ամսէ ամիս մեր գործունեութեան նոյնպէս մանրամասն տեղեկագրութիւնը:


Գործին անյապաղ եւ արագ յաջողութեան համար անհրաժեշտ է անմիջական վաւերացում եւ պետութեան կողմէ հաստատումը սոյն նախագծին, ինչպէս նաեւ ազատ եւ

անարգել գործունեութեան համար պաշտօնական վկայա-
թղթեր՝ պետութեան կողմէ ուղղուած Հայաստանի քաղաքա-
ցիական եւ գիւնուորական իշխանութիւններուն, մեր ձեռ-
նարկները եւ յարաբերութիւնները դիւրացնելու նպատակով:
Կը հաւատամք ձեր անվերապահ քաջալերանքին:

Երեւան, 17 Օգոստոս 1920

ՀԱՅ ՈՐԲՈՒՀԻՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆ

Հակառակ միջոցներու եւ ուժերու անբաւարարու-
թեան, Հ.Մ.Ը.Մ.ի մարզիչները կը բարունակեն անկարելի
կարելի դարձնել, կազմակերպելով եւ կարգաւորելով որ-
բանոցներու ներքին կեանքը: Անոնք յարատեւօրէն եղան
որքերուն հետ: Քաջալերեցին, խրախուսեցին, լսեցին
անոնց վիճերն ու ցանկութիւնները, հետեւեցան անոնց



Ալեքսանդրապոլի 18.000 հայ որբուկները

մՏաւոր պատրաստութեան փուլերուն, ուղղութիւն տուին ապագայ ասպարեզներու ընտրութեան գծով, հետու պահեցին մոլութիւններէ եւ ախտավարակ սովորութիւններէ: Մասնաւոր հոգածութեան առարկայ դարձուցին չափահաս որբուհիներու ընկերային վիճակը, որ օրքսօրէ սկսած էր մՏահոգիչ դառնալ: Հ.Մ.Ը.Մ.ի սկառսներուն հսկողութեամբ վերջ գՏաւ ամէն Տեսակի մՏահոգութիւն:

ՀԱՅՐԵՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱԿ

Հայասանի Ա. Հանրապետութեան անկումի օրերուն, ժողովուրդը կ'ապրէր օրհասական եւ ճգնաժամային պահեր: Շատեր, առիթէն օգտուելով, ուզեցին պարպել Հայասանը իր արժեքաւոր հնութիւններէն: Եւ եթէ այդ օրերուն Հ.Մ.Ը.Մ. ներկայ եղած չըլլար հայրենասէրի իր անսպառ ոգիով եւ անկաՏառ խառնուածքով, այսօր ոչ միայն Ա. Էջմիածինը պարպուած պիտի ըլլար իր թանկագին սպասներէն, այլեւ՝ աներեւութացած պիտի ըլլային հայ մՏքին, հայ հանճարին, հայ հրաՏակեՏ ատոքին դարերու սՏեղծագործութիւնը եղող այդ գանճերը: Այս գործին մէջ մեծ դերակատարութիւն ունեցաւ Վահան Չերագ:

*1918ին մանուկ մը ծնաւ Հայոց ցաւէն, տառապանքէն:
Չարդին արիւնով մկրտեցին այս մանուկը եւ զայն կոչեցին
Հ.Մ.Ը.Մ.: Իսկ այս մանուկին պարտականութիւն տուին՝
ծառայել Հայ ժողովուրդին:*

ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԵՂԵՌԻ ԶՈՂ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐ

ՇԱԽՐՇ ՔՐԻՍԵԱՆ

Հայ մարզական կեանքին, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան տեղեակ անձերուն համար ծանօթ է Շախրշ Քրիսեան:

Մարմնակրթանքի մէջ վկայեալ, մարզանքի ուսուցիչ, սկաուտութեան հիմնադիր, մանաւանդ իր «Մարմնամարզ» թերթով (1911-1914) ան մեծ զարկ կու տայ մարմնամարզութեան թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառներուն մէջ:

Տակաւին 30 տարիքը չբոլորած, կենսունակութեամբ, տեսլականներով եւ իր ժողովուրդին ծառայելու պատրաստակամութեամբ լեցուն իր կեանքը վերջ կը գտնէ թուրքին եաթաղանին տակ:

1915 Ապրիլ 24ի չարաշուք գիշերը առաջին ձերբակալուածներուն մէջ է: Արամ Անտոնեան երբ կ'առաջնորդուի Պոլսոյ կեդրոնական բանտը, կը յիշատակէ Շախրշ Քրիսեանի անունը՝ Ակնունիի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Ռուբեն Չարդարեանի եւ այլոց կողքին:

200Է աւելի մտաւորականներու խումբը Հայտար Փաշայի կայարանէն շոգեկառքով ճամբայ կ'ելլէ: Շոգեկառքը կ'անցնի Նիկոմիդիա, Պիլճիկ, Էսկիշեհիր քաղաքները եւ Էսկիւրիէն (Անգարա) երկու կայարան առաջ կ'անց կ'առնէ: Հոսկէ կը բաժնուին Այաջի քաղաքովայրը ուղարկուելիք անձերը, որոնց մէջ է Շախրշ Քրիսեան: Կառքերով կը տարուին Այաջ, ուր կը հասնին Ապրիլ 27ի երեկոյեան: Կը բանտարկուին զօրանոցին մէջ: Այաջի բանտարկեալներէն ոմանք պատերուն վրայ ձգած են արծանագրութիւններ: Քրիսեան գրած է հետեւեալը. «Շախրշ Քրիսեան Ապրիլ 14 1914»: 14 Ապրիլը հին տոմարով է: Նոր տոմարով կ'ըլլայ Ապրիլ 27: Արծանագրած է Այաջ հասնելու թուականը:

1915ի Օգոստոսի կիսուն, Այաջի քաղաքականներէն մաս մը կը փոխադրուի Էսկիւրիի (Անգարա) բանտը: Կ'ենթադրուի, որ խմբակին մէջ ըլլայ Շախրշ Քրիսեան:

Խմբակը կը միացնեն Էսկիւրիցի հայերու կարաւանի մը եւ քաղաքէն 4-5 ժամ հեռու գտնուող ձորի մը մէջ կը սպաննեն բոլորն ալ:

Կը նահատակուի Շաւարշ Զրիսեան եւ անմուրագ կը մեկնի այս աշխարհէն: Սակայն իր ցանած սերմերը, իյնալով արգաւանդ հողի վրայ, 1918ին ծնունդ կու տան Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան:

ՀԱՅԿ ՃՈՂՈՒԵԱՆ

Օնած է 1893ին, Ատափագար: Կրտսեր եղբայրն է Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Յակոբ Ծ. Սիրունիի եւ Գրիգոր Ճոլոլեանի (երկուքն ալ ծանօթ անձնաւորութիւններ): Նախնական եւ երկրորդական կրթութիւնը կը ստանայ Էսայեան, Կեդրոնական եւ Արդի վարժարաններուն մէջ: Փոքր տարիքէն կը նուիրուի մարզական կեանքին: Կը կիրարկէ ֆութպոլ եւ դաշտային խաղեր: Կը մասնակցի Պոլսոյ հայկական ողիմպիականներուն: 1911ի ողիմպիականին, երկարութիւն ցատկելու մէջ կը հանդիսանայ երկրորդ: Սկիզբը կ'անդամակցի Պոլսոյ «Արաքս», ապա՝ «Տորք» մարմնամարզական ակումբներուն: Արդի վարժարանին մէջ կը կազմէ «Արարատ» ֆութպոլի խումբը:

1914ին կերթայ Կարին, խճուղիներու շինութեամբ զբաղող ֆրանսական ընկերութեան մը մէջ իբրեւ երկրաչափի օգնական աշխատելու համար: Զօրաշարժին, թրջական բանակին մէջ իբրեւ երկրաչափի օգնական, կը ծառայէր սկիզբը Կարին, ապա՝ Սեբաստիա, ուր 1916ին, 1700 հոգիի հետ զոհ կերթայ Շար-Գըշլայի կոտորածին:

ԱԻՏՏԻՍ ԱՅԾԵԱՆ

Օնած է 1892ին, Արաբկիր: Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Խարբերդի ֆրանսական գլխճին մէջ: Մասնակցած է դպրոցի մարզական շարժումին: Գլխճը աւարտելէ ետք կը մեկնի Պոլիս եւ կը հետեւի Օսմանեան համալսարանի ուսողութեան ծիւղին, զոր կ'աւարտէ 1914ին: Ուսանողութեան շրջանին մաս կը կազմէ Պոլսոյ «Տորք» հայ մարմնամարզական միութեան:

Պատերազմի շրջանին կը գտնուի Բաղէշ (Պիթլիս), իբրեւ թուրք լիւտի ուսուցիչ: Կը նահատակուի 1915ին:

ՉԱՐՄԱՅՐ - ՊՕՐՈՍ ԱՅՃԵԱՆ

Օսած է Մարտ 1887ին, Պոլիս: Թաղին վարժարանը աւարտելէ ետք՝ կը յաճախէ Յովհաննէս Հինդլեանի Նոր Դպրոցը, զոր կ'աւարտէ 1914ին: Մասնաւոր յատկութիւններ կը ցուցաբերէ գեղարուեստի եւ մարմնակրթանքի մէջ: Մաս կը կազմէ Կոմիտաս Վարդապետի երգչախումբին: Աջակերտելով Շաւարշ Քրիստեանի, մաս կը կազմէ Նոր Դպրոցի սկաւտական շարքերուն, իսկ դպրոցէն դուրս՝ կ'անդամակցի «Տորք» հայ մարմնամարզական միութեան:

1914-1915 կրթական տարեշրջանին կը պաշտօնավարէ Նոր Դպրոցի մէջ: Ապա, բանակ զօրակոչուելով՝ կը ստանձնէ թարգմանի պաշտօն: Պաշտօնին բերումով կերթայ մինչեւ Ռումանիոյ սառնաշունչ լեռները: 1917ին կը վերադառնայ ֆիզիքապէս քայքայուած: Կը մահանայ նոյն տարին:

ԳԱԼՈՒՄՏ ԱՐԻԱՆԵԱՆ

Պոլսոյ «Ետի Գուլէ»ի որբանոցի որբերէն: Որբանոցէն կ'ելլէ կօշկակարութեան արհեստը սորված: Իր շուրջ հաւաքելով Գում Գափուի եւ Ենի Գափուի աղքատ պատանիները, անոնց մարզանք եւ ֆուրպոլ կը սորվեցնէ: Որբ մը ըլլալով՝ լաւապէս տեղեակ էր զրկեալներու վիճակին: Կը հիմնէ «Որբանոց» ակումբը՝ Գում Գափուի, իսկ «Արծիւ» ակումբը՝ Ենի Գափուի մէջ: 1912ին զանոնք կը միացնէ Գուրուչէշմէի (Պոլիս) «Արտաւազը» մարմնակրթական միութեան, իբրեւ Կետիկ Փաշայի մասնաճիղ: Լաւ ֆուրպոլիստ էր:

Կը տարագրուի Տեր Օօր: Կարճ շրջան մը կը գտնուի Գոնիա, ուրկէ կ'ուղարկուի Տեր Օօր, ուր կը գտնէ իր եղերական վախճանը:

ՎԱՆԵՑԻ ԱՌԻԺ ԽԱՉԻԿ

Հայկական բանակի փայլուն զինուորներէն: Նշանաւոր ֆուրպոլիստ: Չոհ կերթայ հայ-թրքական պատերազմին:

ԵՐՈՒՄՆԴ ՆՇԱՆՆԵՆ

Պոլսոյ Մագրի գիւղի «Սասուն» մարմնամարզական միութեան հիմնադիրներէն: Իրեն շնորհիւ «Սասուն» 1914ին Պոլսոյ ֆութպոլի միջազգային լիկին մեջ կը հասնիսանայ ախոյեան: Կը նահատակուի Եղեռնին:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՈՐԵԱՆ

Պոլսոյ Ռոպերթ Գոլժի լաւագոյն աթլէթներէն եւ ֆութպոլիստներէն: Չոհ կերթայ 1915ին:

ՂԱՉԱՐՈՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կարնոյ Սանասարեանի շրջանաւարտներէն: 1910-1911 կրթական տարեշրջանին կը պաշտօնավարէ Չմըշկածագի վարժարանին, իսկ 1911-1915՝ Չմշկածագի մօտակայ գիւղերէն Իւլ-Պէկի (Եռապոլիս) վարժարանին մեջ, որ անցած էր Միացեալ Շնկերութեան հովանաւորութեան տակ: Կը բարեփոխէ դպրոցին ուսումնական ծրագիրը, այլ նիւթերու կարգին մարզանքին եւ կարտերութիւն տալով: Իր կեանքին անդրադարձողները՝ Օոփաց Արծիւ եւ Խորէն Քնյ, Աճեմեան, անսահման երախտագիտութեամբ կ'արտայայտուին իր մասին: Չոհ կերթայ Մեծ Եղեռնին:

ՎԱՐԴԻՎԱՌ ԵԱՓՈՒՃԵԱՆ

Բնիկ Հաճընցի: Տարօսի Ամերիկեան Գոլժի ուսանող եւ նոյն հաստատութեան մարմնամարզի ոգին: Աքսորուելով Տեր Չօր՝ նահատակուած է հոն:

ՊՕՂՈՍ ՕԷՆՆԵԱՆ

Ղազարոս Գոյումճեանի քերորդին: Պոլսոյ Գառը գիւղի Մխիթարեան վարժարանի աշակերտ: Ուսուցիչ եւ շերամաբոյծ: Կայրուածատր ընտանիքի գաւաակ, սակայն կը նախընտրէր ճնջին ամսականով ծառայել գաւառի հայ սերունդի դաստիարակութեան:

1910-1915 գործակցած է Ղազարոս Գոյումճեանի հետ, կրթական եւ սկաուտական մարզերուն մեջ: Երկուքն ալ զոհ զացած են Եղեռնին:

ԳԵՈՐԳ ԹԵՐՃԻՄԱՆԵԱՆ

Հայկական Ա. Ողիմպիականի (Պոլիս, 1911) կազմակերպիչներն: Սպաննուած է տարագրութեան ընթացքին:

ՅԵՐՈՍ ՍԿԱՈՒՏ ՄԵԼՔՈՆ

Մուշ-Սասուն շրջանի ինքնապաշտպանութեան եւ Թարգմանչաց Վանքի կռիւն մասնակիցներն: Կը գործեր իբրեւ սուրհանդակ: Սահմանի վրայ կը ձերբակալուի եւ մահուան կը դատապարտուի Մուշի մէջ: Ան 15 տարեկան էր:



Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի սկաուտներ
Գրիգոր Յակոբեանի շիրիմին շուրջ

Հ. Մ. Բ. Մ.



*Հանձարդ Հայկեան, Նաւասարդեան սա փօներուն
Արեւափառ՝*

*Ալ վերածնէ փլապակներէն, եւ փառագոչ
քնարդ ա՛ռ:*

*Ձի մենք, յանուն Սէրին, Սերմին, քու հին ցեղիդ
մարմարէն կոյս,*

*Մենք, Չաւակներդ Օգոստոսփառ, պիտի կերպենք
նո՛ր Արշալոյս:*

Հ.Մ.Ը.Մ. ԽՈՐՀՐԳԱՆԻՇ ՅԵՂԱՅԻՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. խորհրդանիշներէն մէկն է մեր ցեղային յարութեան, մահուան նիրաններէն խլուած կեանքի նշոյլ, որ տարուէ տարի անեցաւ, պայծառացաւ, զօրացաւ եւ դարձաւ համատարած ցնծութեան աղբիւր: Հայ ժողովուրդի կացինահար կոնդին վրայ ծլարձակող նոր բարունակ, որ անհաւատալի արագութեամբ պիտի ուռնանար եւ ըլլար ոստախիտ դալար ծառ:

Ահա թէ ինչու Հ.Մ.Ը.Մ. շա՛տ աւելին է քան պարզ մարգական միութիւն մը եւ ահա թէ ինչու անոր կտրած հանգրուանները գաղթաշխարհի մէջ ցրուած մեր ժողովուրդին նուաճումները կը նշեն:

Ի՞նչպէս հասկցնել աշխարհին թէ 1918 թուականին նման կազմակերպութեան մը կեանքի կոչուիլը Վահագնի ծնունդին պէս բան մըն էր. հրաշալի ու խորհրդաւոր: Միլիոն մը հայեր կոտորուած. ուրիշ միլիոն մը ցան ու ցիր. անապատի աւազները դեռ թաց հայու ծով արիւնով. մեր շէներն ու աւանները քար ու քանդ. մեր մտաւորակաւորութիւնը, առաջնորդները, գրողներն ու տեսիլք ունեցող ամբողջ ընտրանին նահատակուած: Սուգ, արցունք ու մոխիր՝ Արեւմտահայաստանի մէկ ծայրէն միւսը: Ազգային վերածնունդի կեդրոն հանդիսացող հայկական Պոլիսն ալ ամայացած: Բայց ահա, մահուան ու անբաժնութեան այս չարաշուք իրականութեան մէջ, տառապանքի եւ լիւմի անհունօրէն մոռալ այդ օրերուն, վերապրողներու արցունքին եւ սիրտը լափող բոցերուն ընդմէջէն պատանի մը կը ծնի, նիշդ Վահագնին պէս:

Այս պատանին, որքան ալ նիհար եւ սննդազուրկ, մեծ առաքիւնութիւն ունի - ան գիտէ ժպտիլ, կը ժպտի կեանքին՝ հակառակ բոլոր արցունքներուն եւ բոլոր սուգերուն: Անոր աչքերը արեգակէն շողեր ունին եւ անոր հոգին գիտէ իր թեւերը պարզել դէպի լուսաւոր հորիզոններ: Կարն տաքատով այս պատանին, իրեն նշանաբան ընտրած է «Բարձրացիր բարձրացուր» մեծիմաստ խօսքը եւ սրբազան խենթութեամբ մը կը հաւատայ թէ պիտի իրականացնէ զայն:

Ո՞ր խորհրդաւոր ոյժը երկնեց զայն, իրբեւ մարմնացումը Մեծ Եղեռնի մոխիրներէն վերածնող ազգի մը ապրելու կամփն եւ մրցադաշտերու վրայ բարձրանակատ տողանցելու կենսունակութեան:

Խորհրդաւոր այս ոյժը ուրիշ տեղ մի՛ փնտռէք. ան մեր հազարամեայ պատմութեան ոգին է, մեր ազգային առաքիւնութիւններուն հրաշալիքը:

Մ. ԻՇԽԱՆ

Դուք, սիրելի՛ պատանիներ, երիտասարդներ ու երիտասարդուհիներ, Հո՛ւն, դաշտին վրայ, սոսկ Հ.Մ.Բ.Մ. չէք: Դուք կը մարմնաւորէք Հայութիւնը՝ իր ամբողջ երգերով ու վերքերով, մաքառումներով ու երազներով, իր անցեալով ու ներկայով ու մա՛նաւանդ՝ իր լուսաշող ապագայով:



... Ձեզմո՛ւ վ է որ Հայութիւնը կանաչ է՝ ծլարձակող ծառի մը նման: Ձեզմո՛ւ վ է որ Հայութիւնը լուսաւոր է՝ ճառագայթող արեւի մը նման:

Դուք մեր լո՛յսն էք անմար՝ կեանքի խաւարին դիմաց: Դուք մեր բռնցքացած կա՛ մքն էք՝ անարդարութեան դիմաց: Դուք մեր պայքարի կրակն էք՝ պարտուողականութեան դիմաց: Դուք մեր աչքն էք յուսաւա՛տ՝ ապագային բացուած:

Դուք այսօր խտացած վկայութիւնն էք ու կ'ըսէք մեզի եւ աշխարհին, թէ Հայութիւնը անցեա՛լ չէ, պատմութի՛ւն չէ, այլ իր ապագան կերտելու յանձնառութեամբ ապրող ու պայքարող ազգ:

Դուք այսօր խտացած Հաւատք էք ու կ'ըսէք մեզի ու աշխարհին, թէ Հակառակ մեր դառն ճակատագրին, Հակառակ մահուան ու քանդումին, Հայութիւնը վերածնեա՛լ ազգ է, մահէն կեանք կերտած յարութեան ժողովուրդ:

... Դուք մեզի Համար խտացած տեսիլք էք. ձեզմով մենք կը նայինք մեր ժողովուրդի լուսապայծառ ապագային՝ յուսաւա՛տ աչքերով. ձեզմո՛ւ վ մենք կը քալենք դէպի մեր ժողովուրդի ապագան՝ Հաստատ քայլերով:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՎԿԻՈՅ

*Թէ նոր զոհ է պէտք ընդհանուր գործին
Այդ ո՞ւմ էք փնտրում, ես արդէն հոս կամ...*



80-ամեակ Հայկական Ֆեդասպանութեան,
28 Մայիս 1995, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտ

ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՅԱՌԱՉ, ՆԱՀԱՏԱԿ ՅԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ...

Ձեզ ո՞վ ծնաւ:

Ո՞վ սահմանեց՝ որ այսպէ՛ս ծնիիք:

Եկրասք, օր մը, ջուրի սեղ արի՛ւն բերաւ հայոց լեռնե-
րէն, ու ավուճեց նեժուած դիակներ, ուրի՛ւ օր մը, հրա՛ւճ,
սկսան տղանցել:

Վոսփորը իր արիքներուն մէջ խեղդեց հազար մանուկի
ձայն, բայց խեղդամահ ուրի՛ւ հազարներ մագլցեցան
Պոլիսն ի վեր եւ ծածանեցան իբրեւ դրօշ գոյութեան:

Արաբական անապասները գերեզման դարձան միլիո-
նի. - գերեզմանէն սակայն, շարժում ժայթքեց ու անա-
պասները իլացան փողերախումբերու յաղթական պայ-
թիւնէն:

Յեղը գիտցաւ նահասակները վերածել հողին կամովին
տրուած ցորենի հասիկին, ու նոյն ցեղը, մեռնող հասիկին
սեղ, աւիւեց՝ որ ծնին ա՛յլ հազարներ, ո՞վ գիտէ, թերեւս
աւելի՛ տկուն, ինչպէս պատուասուած մեսադալար ծառ:

Ձեզ ո՞վ ծնաւ:

Պիտի բանա՛վ պատմութեան բանաստեղծական էջը եւ
իբրեւ պատասխան՝ կրկնէ՛ք դիւցազնավէպը.

- Երկներ երկին եւ երկիր...

Ապա, խոռոսագին շարունակէք.-

- Մենք ծնունդն ենք այն ամպարագիծ շարժումին՝ որ
գծեց դիւցազն Հայկը, երբ աղեղը կը լարէր Բելի կուրծ-
փն:

- Մենք աղօթքն ենք Սուրբին՝ որ ծննադիր կը սպասեք
գերագո՛յն համոզումով, որ գա՛ր Լոյսը:

- Մենք սերունդն ենք՝ որուն ուղղուած էր պայմանա-
կան ու սրբազնագո՛յն անեծքը.-

«Այսօր չարիք թէ մոռանան մեր որդիք,

Թող ողջ աշխարհ հայուն կարգայ նախասինք»:



Երեւանի Յատկան

ԱՅՍՔԱՆ ՉԱՐԻՔ ՉԵՆ ՄՈՌԱՅԱԾ ՄԵՐ ՈՐԴԻՔ ...



Մեզ ո՞վ ծնաւ:

- Մեզ ծնաւ մեծ Տառապանքն ու մեծ Յոյսը:

Մեզ ծնաւ վաղուան Գեղեցկութիւնը, մեզ ծնաւ Արա-
րասի կանչը, մեզ ծնաւ մորթոսուող մեր ժողովուրդը:

Մենք, մենք անմահներն ենք նահապետիկ ցեղին:

Այսպէ՛ս պիտի գոռաք ու ձեզ լսողները պիտի զարմա-
նան, պիտի հիանան, սփանջանան ու յարգե՛ն:

Ու դուք պիտի շարունակեք, անսայթա՛ք, մնալ ուն-
կընդիր ցեղի ձայնին:

Պիտի փախ՛ գալիկը, ու ծերունին պիտի հեկեկա՛յ:

Պիտի փախ՛ մարգիկը, ու պառաւը պիտի օրհնէ:



Պիսի ֆալե՛ սկաուսը, ու մայրիկը հպարսանայ:

Պիսի ֆալե՛ արեւոյւր, ու հայրիկը փառաւորուի՛:

Ոսկի՛ զաւֆ, ոսկի՛ դնդերներով, ոսկի արսով.-

Պիսի սողանցե՛ք՝ ու գէտինը պիսի դողայ:

Պիսի սողանցե՛ք՝ ու պիսի խայսան մահասակներու
ոսկորները:

Պիսի սողանցե՛ք՝ ու անիրաւուածները պիսի լեցուին
յոյսով:

Պիսի սողանցե՛ք՝ ու բոլո՛ր դրօշները պիսի ըլլան
միեւնո՛յն սրբազան լեռան պասկերով:

Պիսի սողանցե՛ք, ու եթէ մարդիկ պահ մը փարացնե՛ն
իրենց խիղճը, փարերը պիսի դառնան խիղճ ու աղաղակէն.

- Յառա՛ջ...

- Յառա՛ջ, մահասակ ցեղի անմահներ:


Ձեր երթը մաքուր է, ազգային է ու համամարդկային:

Դուք ծնունդն էք նահասակութեան մը մանաւանդ, ու հետեւաբար արդար է որ անմահութիւնը ըլլայ ձեր դափնին:



Յառա՛ջ ու ազգը ձեզի հետ,
Յառա՛ջ ու Ասուած ձեզի պահապան,
Դուք,
Նահասա՛կ ցեղի անմահներ,
Դուք,
Ուխտաւորնե՛ր Արարա՛սի:

Ե. ԵՐԿԱԹ



*Ճամբայ քաղե՛ք
մեկի կեկ
աւու...*

ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՄԱՐ


1946ին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը արեւաւ մը կը կազմակերպէ դէպի Գամիւլի, խանդավառելու համար Ճեզիրէի հայ գիւղերու բնակչութիւնը: 400 մարդիկներ եւ սկաւոսներ, Լեւոն Պապուզեանի խմբապետութեամբ, Շաքաթ գիւղեր, օթոպիւսերով մամբայ կ'ելլեն Հալէպէն: Առաւօտուն կը հասնին Տէր Զօր: Եղեռնի յիշատակին կառուցուած մասրան մէջ աղօթելէ ետք, կ'ուղղուին դէպի Գամիւլի եւ ահա անօթութեան եւ ծարաւի պատճառով դժգոհութիւնները կը բարձրանան: Խմբապետը տեղի չի տար: 5 ժամ մամբայ կ'սրելէ ետք, անապատի ամառային մէջ կը նստարեւն, որ զիրենք կանխող օթոպիւսը խանգարուած է: Դժգոհութիւնները կը կրկնապատկուին: Շատեր կէս մամբէն ետ դառնալու արտայայտութիւններ կ'ունենան: Խմբապետը, որ մինչ այդ լուռ ու մունջ կը հետեւէր բոլոր անցուդարձերուն, տղոց դառնալով՝ բարկացած կ'ըսէ.

«Ամօ՞թ ձեզի. մեղք ձեզի տրուած դաստիարակութեան: Դուք գիտե՞ք թէ ուր կը գտնուիք: Այս վայրը հայ ժողովուրդի սպանդանոցն է: Հոս է որ ձեր հայրերը եւ մայրերը շարդուեցան կացիներով եւ սուիներով: Այս վայրին անուան է Մարկասէ: Անոնք իրենց պապեմական տուներէն մինչեւ հոս փախելով եկած են, առանց տրտման, շաքաթներ տեսող շարչարանքէ եւ անօթութենէ ետք: Դուք ոչ իսկ մէկ օր դիմացաք: Մենք պարզապէս ուզեցինք փորձել ձեր հայրենասիրական ոգին եւ տկարութիւնը: Եւ փորձը ցոյց տուաւ, որ դուք արժանի չէք հայ կոչուելու: Ես որոշեցի եմ միմակաւ շարունակել. ով որ կ'ուզէ թող միանայ ինձի: Օթոպիւսը խանգարուած չէ. պարզապէս այդպէս ձեւացուցիմք՝ շօտափելու համար ձեր հակազդեցութիւնը»:


Խմբապետին այս խօսքերը շանթահարիչ ազդեցութիւն կ'ունենան: Բոլորը ցնցուած՝ կը զգան հարուածին ծանրութիւնը եւ անզգալաբար բոլորը ֆոլ-ֆոլի գալով ծունկի կու գան կեսօրուան այրող աւազներուն վրայ եւ խոնաւ աչքերով միաբերան կ'երգեն հրաւարի «Տէր Մղորմեա»ն: Խմբապետը մինչ այդ չկարենալով զսպել իր զգացումները, յամբաւայլ կը բարձրանայ *օթոպիւս* եւ հոնֆուր-հոնֆուր կու լայ: Ուխտը կասարուած էր:

ՕՆ ՓՈՐՁԵՅԷՔ ԵԹԷ ԿԱՐՈՂ ԷՔ

Կ'ուզէի տեսնել աշխարհի մէջ ոյժ մը, որ կարենար կործանել հայ ցեղը, աննշան մարդոց այս փոքրիկ տոհմը, որուն պատմութիւնը վերջացած է, որուն բոլոր պատերազմները մղուած ու կորսուած են եւ որուն շէնքերը փլած են: Օ'ն, կործանեցէ՛ք այս ցեղը: Ըսէք թէ նորէն 1915 թուականն է: Պատերազմ կայ: Քարուքանդ ըրէք Հայաստանը: Փորձեցէ՛ք, եթէ կարող էք: Քեցեցէ՛ք հայերը իրենց տուններէն անապատները: Թողէ՛ք զանոնք առանց հացի եւ ջուրի: Այրեցէ՛ք անոնց տներն ու եկեղեցիները: Եւ տեսէ՛ք, թէ ցեղը պիտի չվերապրի՞ նորէն, երբ անոնցմէ երկու հոգի, ֆսան տարի ետքը, հանդիպին իրարու զարեջրասան մը մէջ եւ խնդան ու խօսին իրենց լեզուն: Օ'ն, տեսէ՛ք թէ կրնա՞ք բան մը ընել: Օ'ն, փորձեցէ՛ք բնաջնջել զանոնք:



ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ



Այս հողերը կը պատկանին Հայաստանին



ՏՊԱՐԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆԻ ԿԻՆԿԻՈՅ
ԱՆԹԻԼԻԱՍ